ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ



www.coe.int/cdcj

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Սույն կոնվենցիան առաջին միջազգային իրավաբանորեն պարտադիր փաստաթուղթն է, որով փաստաբանի մասնագիտության պաշտպանությունը դրվում է իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքի և արդարադատության մատչելիության ապահովման հիմքում:

ՈՐՆ Է ԱՅՍ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

Փաստաբաններն առանցքային դեր են կատարում բոլոր ժողովրդավարական պետությունների արդարադատության համակարգերում: Նրանք էական նշանակություն ունեն իրավունքի գերակայության պահպանման և, մասնավորապես, բոլորի համար արդարադատության մատչելիության երաշխավորման գործում: Նրանք նաև նպաստում են արդար դատաքննության իրավունքի իրականացմանը և յուրաքանչյուր անձի իրավունքների պաշտպանությանը: Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան արձագանք է փաստաբանների նկատմամբ ոտնձգությունների, սպառնալիքների ու հարձակումների, ինչպես նաև նրանց մասնագիտական պարտականությունների կատարմանը միջամտելու դեպքերի աճին:

Կոնվենցիայի նպատակն է պաշտպանել փաստաբաններին և նրանց մասնագիտական միավորումները, որոնք առանցքային դեր ունեն ինչպես առանձին փաստաբանների, այնպես էլ փաստաբանական մասնագիտության ներկայացուցիչների իրավունքների ու շահերի պաշտպանության գործում: Կոնվենցիան սահմանում է իրավական երաշխիքներ՝ ապահովելու փաստաբանների անվտանգությունն ու անկախությունը, ինչպես նաև փաստաբանական մասնագիտական գործունեության արդյունավետ իրականացումը: Այն սահմանում է փաստաբաններին սպառնալիքներից, ոտնձգություններից և բռնությունից պաշտպանող չափանիշներ՝ հնարավորություն տալով նրանց պաշտպանել իրենց վստահորդներին՝ առանց վախի կամ մասնագիտական գործունեությանը միջամտության:

ԻՆՉՈՎ Է ԱՅՍ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ

Այս կոնվենցիան՝

- ճանաչում և պաշտպանում է փաստաբանների անկախությունը և առանց անհարկի միջամտության մասնագիտական գործունեություն ծավալելու ազատությունը;
- տարածվում է բոլոր փաստաբանների և նրանց մասնագիտական միավորումների վրա;
- նախատեսում է սպառնալիքներին, ոտնձգություններին և կամայական կալանավորմանը հակազդելու պաշտպանական միջոցների ձեռնարկում;
- պաշտպանում է փաստաբանների և նրանց վստահորդների միջև հաղորդակցության գաղտնիությունը;
- ստեղծում է մշտադիտարկման մեխանիզմ՝ Կոնվենցիայի իրականացման ընթացքը պարբերաբար գնահատելու համար;
- բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման և վավերացման, ինչպես նաև ոչ անդամ պետությունների միանալու համար:

ՈՐՈՆՔ ԵՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավունքը (ինչպես՝ օրենքի հիման վրա և առանց խտրականության մասնագիտական գործունեությամբ զբաղվելու թույլտվություն ստանալը):
- Մասնագիտական իրավունքները (ինչպես՝ վստահորդների հետ գաղտնի հանդիպելու կամ հաղորդակցվելու իրավունքը):
- Արտահայտվելու ազատությունը (ինչպես՝ օրենսդրության նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցելը):
- Մասնագիտական կարգապահությունը (ինչպես՝ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը՝ օրենքով սահմանված մասնագիտական վարքագծի չափանիշներին համապատասխան):
- Փաստաբանների և մասնագիտական միավորումների պաշտպանության միջոցները (ինչպես՝ փաստաբանների՝ առանց սպառնալիքների կամ հարձակումների թիրախ դառնալու մասնագիտական գործունեություն իրականացնելու հնարավորությունը):

ԻՆՉՊԵՍ Է ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Կոնվենցիայի կարևոր առանձնահատկություններից է դրա իրականացման նկատմամբ վերահսկողություն ապահովող մշտադիտարկման մեխանիզմը: Այն բաղկացած է երկու բաղադրիչից և հիմնված է Կոնվենցիայի մասնակից պետությունների հետ շարունակական երկխոսության վրա:

Փաստաբանի մասնագիտության պաշտպանության հարցերով փորձագետների խումբ (ԳՐԱՎՈ)

Անկախ փորձագետներից կազմված ԳՐԱՎՈ-ն պարբերաբար գնահատելու է Կոնվենցիայի իրականացումը յուրաքանչյուր մասնակից պետությունում: Այդ նպատակով պետական մարմիններին կուղարկվեն Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ նպատակային հարցաթերթեր, ինչպես նաև կանցկացվեն քննարկումներ պետական մարմինների և համապատասխան գործընկերների հետ: Այն դեպքերում, երբ տեղեկությունները հնարավոր չէ այլ եղանակով հավաստիորեն ստանալ, կարող են կազմակերպվել նաև տեղում այցեր: ԳՐԱՎՈ-ն կարող է հրատապ ընթացակարգով անդրադառնալ Կոնվենցիայի հնարավոր լուրջ խախտումներին: Հավաքված տեղեկությունների հիման վրա ԳՐԱՎՈ-ն յուրաքանչյուր մասնակից պետության վերաբերյալ կպատրաստի զեկույց՝ իր եզրակացություններով: Քաղաքացիական հասարակությունն ու մասնագիտական միավորումները կարևոր դեր կունենան մշտադիտարկման գործընթացին մասնակցելու և Կոնվենցիայի պահանջների պահպանումը խթանելու գործում: ԳՐԱՎՈ-ն նաև պարզաբանումներ և ուղեցույցներ կտրամադրի Կոնվենցիային առնչվող թեմաների ու հասկացությունների վերաբերյալ:

Կողմերի կոմիտե

Այս քաղաքական մարմինը կազմված է Կոնվենցիայի մասնակից պետությունների ներկայացուցիչներից:

ԳՐԱՎՈ-ի զեկույցների և եզրակացությունների հիման վրա Կողմերի կոմիտեն յուրաքանչյուր մասնակից պետության կուղղի առաջարկություններ՝ ԳՐԱՎՈ-ի զեկույցներին ի պատասխան ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավական համագործակցության
եվրոպական կոմիտեի (CDCJ)
քարտուղարություն

Եվրոպայի խորհուրդ

Մարդու իրավունքների և իրավունքի
գերակայության գլխավոր տնօրինություն

Իրավական համագործակցության վարչություն

Avenue de l'Europe
67075 Strasbourg Cedex
FRANCE

Էլ. փոստ՝ DGI-CDCJ@coe.int

Կայք՝ **www.coe.int/cdcj**

PREMS 203026

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE